**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ν 106-Ն**

<<12>> սեպտեմբերի 2025 թվական                    քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ՊԱԶ>> ՄԱԿՆԻՇԻ 936LL70 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԼԱՆՋԻԿ-ՄԱՐԱԼԻԿ-ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ-ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԵՐԹՈՒՂՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգի>> 69-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի N ԴԽ/25.2/30415-2025 գրությունը՝ «Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի» ներմարզային երթուղու ժամանակավոր սպասարկման գործընթացի կազմակերպմանը համաձայնություն տալու վերաբերյալ, հաշվի առնելով Լանջիկ, Մարալիկ և Գուսանագյուղ բնակավայրերի բնակչության խնդրանքը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող <<ՊԱԶ>> մակնիշի 936LL70 պետական համարանիշի ավտոբուսով /փոխարինող տրանսպորտային միջոցը՝ <<ՖՈՐԴ>> մակնիշի 933 LL70 պետական համարանիշի ավտոբուս/ Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի և հետադարձ երթուղով ժամանակավորապես ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման կազմակերպմանը:

2. Սահմանել սույն որոշման 1-ին կետով նախատեսված տրանսպորտային միջոցներով Լանջիկ – Մարալիկ – Գուսանագյուղ – Գյումրի և հետադարձ երթուղով ժամանակավորապես ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման

դիմաց վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից և գործում է մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994 որոշմամբ հաստատված կարգով՝ ավտոմոբիլային տրանսպորտով Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի և հետադարձ երթուղու ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրությունը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ՝ 12 | դեմ՝ 0 | ձեռնպահ՝ **0** |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Է. ՌԻՌՈՒՏՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱՔՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<12>> սեպտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2025 թվականի
սեպտեմբերի 12-ի N 106-Ն որոշման

## ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱԶ ՄԱԿՆԻՇԻ 936LL70 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԼԱՆՋԻԿ-ՄԱՐԱԼԻԿ-ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ-ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԵՐԹՈՒՂՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՆԵՐԻ

| Հ/հ | Համայնքի կողմից մատուցվող ծառայության տեսակը | Մեկնման ժամանակացույց | Սահմանված դրույքաչափերը ըստ երթուղու /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | <<ՊԱԶ>> մակնիշի 936LL70 պետական համարանիշի ավտոբուսով /փոխարինող տրանսպորտային միջոցը՝ <<ՖՈՐԴ>> մակնիշի 933 LL70 պետական համարանիշի ավտոբուս/ Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի և հետադարձ երթուղով ուղևորափոխադրում | X | X |
| | **Ուղիղ** | | |
| | Մարալիկ-Լանջիկ | 7:40 | 150 |
| | Լանջիկ-Մարալիկ | 8:00 | 150 |
| | Մարալիկ-Գուսանագյուղ | 8:20 | 200 |
| | Գուսանագյուղ-Գյումրի | 8:40 | 250 |
| | Լանջիկ-Գուսանագյուղ | X | 250 |
| | Լանջիկ-Գյումրի | X | 350 |
| | Մարալիկ-Գյումրի | X | 300 |
| | **Հետադարձ** | X | X |
| | Գյումրի-Գուսանագյուղ | 14:30 | X |
| | Գուսանագյուղ-Մարալիկ | 15:00 | X |
| | Մարալիկ-Լանջիկ | 15:20 | X |
| | Լանջիկ-Մարալիկ | 15:40 | X |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**